



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
 Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
 Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«17» հուլիսի 2015 թվական N 101-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՆՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐԻ ԵՎ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԳԾԱՆՇՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, « Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Ճանապարհային երթևեկության նշանների և ճանապարհների գծանշման աշխատանքների գնման համար հատկացնել 3 800 000 (երեք միլիոն ութ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Թույլատրել անհրաժեշտ գնումները իրականացնել բանակցային ընթացակարգի կիրառմամբ՝ առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու:

3. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեի 4/5/1 գործառական դասակարգման (4239) «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» հոդվածից 1 300 000 (մեկ միլիոն երեք հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, (4269) «Հատուկ նպատակային այլ նյութեր» տնտեսագիտական դասակարգման հոդվածից 2 500 000 (երկու միլիոն հինգ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

Կողմ (14)

Դեմ (0)

Ձեռնպահ(0)

- Ա.Աղամյան
- Գ. Աղամյան
- Ա. Բաղեյան
- Ա.Բաղդամյան
- Մ.Գաբոյան
- Ա.Գրիգորյան
- Վ.Եղիզարյան
- Հ.Խաչատրյան
- Հ.Կարապետյան
- Տ.Հովհաննիսյան
- Վ. Հունանյան
- Ն.Մեսրոպյան
- Ռ.Մխիթարյան
- Մ.Սահակյան

**ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է՝
 ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝**

Ս. Բ Ա Լ Ա Ս Ա Ն Յ Ա Ն

Ռ. ԱՍԱՏՐՅԱՆ

17 հուլիսի 2015թ.
 ք. Գյումրի